Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 7

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2011թ. ապրիլի 27-ին կայացած թիվ 6 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքը ֆակուլտետում:
2. Հակոբ Օշականին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների վիճակը:
3. Հայոց լեզվի պատմության ամբիոնի կողմից անցկացվելիք գիտական նստաշրջանի խնդիրների քննարկում:
4. Կուրսային ավարտական աշխատանքների և պրակտիկայի՝ ըստ ամբիոնների համամասնության տոկոսային բաժանման քննարկում և հաստատում:
5. Հայ գրականության ամբիոնի ասիստենտ Հայկ Համբարձումյանի արտասահմանյան գործուղման հաշվետվությունը:
6. Ընթացիկ հարցեր:՝

Օրակարգի առաջին հարցի առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Լ. Եզեկյանը: Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակը անմխիթար է:

Հակոբ Օշականի ստեղծագործություններին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների առիթով Ավագյանը հանձնարարեց, որ յուրաքանչյուր ամբիոնից ներկայացնեն զեկուցումներ:

3-րդ հարցի առիթով ելույթ ունեցան հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը և հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ Ռ. Սաքապետոյանը: Նրանք խոսեցին իրենց ամբիոնների՝ առաջիկայում կազմակերպվող միջազգային գիտաժողովի մասին: Ավագյանը նշեց, որ իր տարբերություն գրականագիտության՝ լեզվաբանությունը կաղում է:

4-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ դեկանի տեղակալ Արտաշես Սարգսյանը: Նա նշեց, որ ռեկտորատը պահանջում է կուրսային, ավարտական աշխատանքների և պրակտիկայի՝ ըստ ամբիոնների համամասնության տոկոսային բաժանում և հաստատում: Նա նշեց, որ այս տարվանից անհրաժեշտ է պրակտիկայի ժամեր տալ նաև գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնին:

Ելույթ ունեցավ հայ գրականության ամբիոնի ասիստենտ Հայկ Համբարձումյանը, որ ներակայացրեց իր ԱՄՆ-ի UCLA-ի համալսարանի հայագիտական կենտրոն գործուղման հաշվետվությունը:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

1. Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողներ **Անի Գագիկի Կարապետյանին, Լուսինե Տիգրանի Ոսկանյանին, Զարուհի Ռևիկի Ենգիբարյանին** երաշխավորել մասնակցելու «ԵՊՀ-ի լավագույն ուսանող» մրցույթին:
2. ԵՊՀ-ի հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ Ռուբեն Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարանը» երաշխավորել հրատարակության:
3. ԵՊՀ-ի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի 2-րդ կուրսի մագիստրոս **Մերի Արթուրի Սարգսյանի**՝ «Բառը որպես թարգմանության միավոր», **Լուսինե Զոհրակի Մուրադյանի**՝ «Դեմքի քերականական կարգի արտահայտության առանձնահատկությունները վրացերենում», **Խաչիկ Հարությունյանի**՝ ««Բառգիրք Հայոց» բառարանի աղբյուրները. նրա տեղն ու դերը հայ բառարանագրության պատմության մեջ», **Հասմիկ Սարգսյանի**՝ «Ժամանակի մակբայները Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում», **Էմմա Ոսկանյանի**՝ «Ենթակայական կամ ներկա դերբայը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում» աշխատանքները երաշխավորել տպագրության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ **ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**